ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **27.02.2026թ.**

1. **Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2026 թվականի փետրվարի 27-ի հերթական նիստին մասնակցում էին.**

Գ.Պապոյան	– ՀՀ էկոնոմիկայի նախարար, Խորհրդի նախագահ
Ժ.Խաչատյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ, Խորհրդի անդամ
Ն. Հովակիմյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Լ.Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Է. Էլբակյան	- ՀԱՊՀ մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր , Խորհրդի անդամ
Կ. Չիլինգարյան	- «Սպառողների խորհրդատվության կենտրոն» նախագահ, Խորհրդի անդամ
Կ.Սահակյան	- ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Խորհրդի անդամ
Ա. Կոտոյան	– Տեսչական մարմնի ղեկավար
Ա. Մկրտչյան	– Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Գ. Սահակյան	- Խորհրդի քարտուղար

2. **Հերթական նիստի օրակարգում ընդգրկված հարցերն են.**

1. Թանկարժեք մետաղների վրա անվանանիշի առկայության հետ կապված հարցեր:

   Զեկուցող՝ Ա. Կոտոյան

2. Զբոսաշրջության ոլորտի ստուգումների հետ կապված հարցեր

   Զեկուցող՝ Ա. Կոտոյան

3. Բանեցված յուղերի հետ կապված խնդիրների քննարկում

   Զեկուցող՝ Գ. Պապոյան

4. Հեղուկ ածխաջրածնային գազի մակնշման հարց

   Զեկուցող՝ Ա. Կոտոյան

5. Պետական գնումներում համապատասխանության գնահատման փաստաթղթերի ստուգման խնդիր

   Զեկուցող՝ Ա. Կոտոյան

6. Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների ներմուծման կարգի հետ կապված հարցեր

   Զեկուցող՝ Ն. Հովակիմյան

7. Բիտումի որակական և անվտանգային չափանիշների հետ կապված հարցեր

   Զեկուցող՝ Ն. Հովակիմյան

8. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի բյուջետային հայտին:

   Զեկուցող՝ Ա. Կոտոյան

9. Հաշվետվության ներկայացում

   Զեկուցող՝ Ա. Կոտոյան

Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2026 թվականի փետրվարի 27-ի երկրորդ հերթական նիստը սկսվեց օրակարգի հաստատմամբ:

Օրակարգի առաջին հարց՝ թանկարժեք մետաղների վրա անվանանիշի առկայության հետ կապված հարցեր՝ զեկուցող Ա. Կոտոլյան:

Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոլյանը հայտնեց, որ «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի համաձայն թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մասնագիտացված, այդ թվում՝ մանրածախ առուվաճառքը իրականացվում է դրանց վրա օրենքով սահմանված կարգով անվանանիշի առկայության, սակայն ըստ թանկարժեք մետաղներից պատրաստված իրեր արտադրողների անվանանիշերի տրամադրման համար պահանջվում է մոտավորապես վեց ամիս ժամանակ:

Ա.Կոտոլյանը առաջարկեց այդ ընթացքում կամ ընդհանրապես թանկարժեք մետաղների ոլորտում ստուգումներ չիրականացնել, կամ Խորհրդի որոշմամբ Տեսչական մարմնի կողմից ստուգումներ իրականացնելիս անվանանիշերի մասը բաց թողնել մինչև այդ ժամկետի լրանալը:

Որոշվեց միաձայն՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից թանկարժեք մետաղների ոլորտում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վրա անվանիշի առկայության մասով ստուգումներն իրականացնել 2026 թվականի հուլիսի 1-ից:

Օրակարգի երկրորդ հարց՝ զբոսաշրջության ոլորտի ստուգումների հետ կապված հարցեր՝ զեկուցող՝ Ա.Կոտոլյան:

Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոլյանը Խորհրդի անդամներին հայտնեց, որ զբոսաշրջության ոլորտը հանդիսանում է Տեսչական մարմնի նոր ճյուղերից մեկը և զբոսաշրջության կոմիտեի միջնորդությամբ այդ ոլորտում նախորդ տարում ստուգումները հետաձգվել են, սակայն այս տարի զբոսաշրջության ոլորտում ստուգումների հարցը բերվել է Խորհրդ՝ կարիք ունենք կրկին հետաձգելու, թե ստուգումներ իրականացնելու: Այս կապակցությամբ Խորհրդի նախագահ Գևորգ Պապոյանը տեղեկացրեց, որ այս ոլորտին առնչվող ընդհանուր փաթեթը իր մեջ ներառում է 15-16-ի կարգի կառավարության որոշումներ և մի շարք փաթեթներ՝ մասնավորապես 12 կառավարության որոշումներ արդեն ընդունվել են, գործընթացը ավարտին հասցնելու համար մնում է ընդունել երկու կամ երեք որոշում, որոնք շրջանառության մեջ են: Գևորգ Պապոյանը հայտնեց, որ գործընթացը պարտավորվել

են ավարտին հասցնել մինչև առաջին կիսամյակի վերջը և կողմ կլինի երկրորդ կիսամյակից Տեսչական մարմնի կողմից զբոսաշրջության ոլորտում ստուգումների իրականացմանը: Արմեն Կոտոյանը հայտնեց, որ բացի կառավարության որոշումներից պետք է ընդունվեն նաև մի քանի նախարարի հրամաններ, որից հետո միայն հնարավոր կլինի սկսել ստուգումները:

Բարձրացված հարցի շուրջ հնչեցին տարբեր կարծիքներ և արդյունքում Խորհրդի անդամները որոշեցին զբոսաշրջության ոլորտում Տեսչական մարմնի ստուգումները հետաձգել մինչև առաջին կիսամյակի ավարտը:

Որոշվեց միաձայն՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից զբոսաշրջության ոլորտում ստուգումներն իրականացնել 2026 թվականի հուլիսի 1-ից:

Օրակարգի երրորդ հարց՝ բանեցված յուղերի հետ կապված խնդիրների քննարկում՝ զեկուցող Գ. Պապոյան:

Գևորգ Պապոյանը հայտնեց, որ օգտագործված յուղերի խնդիրներով իրենց են դիմել շատ քաղաքացիներ և առանձին տնտեսավարող սուբյեկտներ առ այն, որ Հայաստանում առկա են օգտագործված յուղեր, որոնք վերամշակվում են, որից հետո կրկին մտնում են շուկա և դրանց օգտագործման հետևանքով շարքից դուրս են գալիս մեքենաների շարժիչները և փոխանցման տուփերը:

Հարցի հետ կապված Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Արթուր Մկրտչյանը հայտնեց, որ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 030/2012) սահմանված յուղերի անվտանգության ցուցանիշները շատ ցածր են և ցանկացած յուղ փորձաքննության արդյունքում համապատասխանում է ներկայացվող պահանջներին:

Գևորգ Պապոյանը հարցի լուծման համար առաջարկեց Տեսչական մարմնի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանումներին համատեղ քննարկել «Քսանյութերին, յուղերին և հատուկ հեղուկներին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 030/2012) սահմանված յուղերի անվտանգության ցուցանիշները և հաջորդ կամ հաջորդող որևէ այլ նիստի ներկայացնել ցուցանիշների խստացման հետ կապված առաջարկություն /շահվետվություն/:

Նպատակահարմարության դեպքում եզրակացության արդյունքներով ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն առաջարկություն կներկայացնի «Քսանյութերին, յուղերին և հատուկ հեղուկներին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 030/2012) սահմանված յուղերի անվտանգության ցուցանիշներին ներկայացվող պահանջները խստացնելու ուղղությամբ:

Որոշվեց միաձայն՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանումներին համատեղ քննարկել յուղերի անվտանգության ցուցանիշները և հաջորդ կամ հաջորդող որևէ այլ նիստի ներկայացնել ցուցանիշների խստացման հետ կապված առաջարկություն:

Օրակարգի չորրորդ հարց՝ հեղուկ ածխաջրածնային գազի մակնշման հարց՝ զեկուցող Ա.Կոտոյան:

Արմեն Կոտոյանը ներկայացրեց հեղուկացված ածխաջրածնային գազերի շուկայում մակնշման հետ կապված խնդիրը և հայտնեց որ վառելիքի Հայաստանյան շուկայում գազերի մանրածախ առևտրի կետերում վաճառվում է երկու տեսակի հեղուկ գազ՝ կոմունալ-կենցաղային և արտադրական սպառման համար նախատեսված, որն որակապես ավելի ցածր է, ավտոմոբիլային տրանսպորտի շարժիչային վառելիքի համար նախատեսված, որն որակապես ավելի բարձր է: Սակայն առկա չէ որևէ օրենսդրական արգելք կոմունալ-կենցաղային և արտադրական սպառման համար նախատեսված հեղուկ գազով լիցքավորելու ավտոմեքենաները: Տեսչական մարմինը վերահսկողության իրականացման ընթացքում որպես կոմունալ-կենցաղային և արտադրական սպառման համար մակնշված վառելիքաբաշխիչ աշտարակներից փորձանմուշ չի վերցնում, բավարարվում է միայն ճիշտ մակնշմամբ, իսկ ավտոմոբիլային տրանսպորտի շարժիչային վառելիքի համար մակնշված վառելիքաբաշխիչ աշտարակներից փորձաքննության նպատակով վերցնում է փորձանմուշ և տեխնիկական կանոնակարգով սահմանված ցուցանիշների անհամապատասխանության դեպքում տնտեսավարող սուբյեկտի պատասխանատու անձը ենթարկվում է վարչական պատասխանատվության ՎԻՎ օրենսգրքի 188-րդ

հոդվածի 7-րդ մասի հատկանիշներով, որն առաջացնում է տուգանքի նշանակում 1.000.000 ՀՀ դրամի չափով /նվազագույն աշխատավարձի հազարապատիկը/: Պատասխանատվությունից խուսափելու համար համատարած տնտեսավարողները վաճառքում առկա հեղուկացված ածխաջրածնային գազը մակնշում են որպես կոմունալ-կենցաղային և արտադրական սպառման համար նախատեսված հեղուկ գազ: Արդյունքում լիցքավորված հեղուկ գազը չի ծառայում նպատակային:

Ծավալուն քննության արդյունքում հնչեցին խնդրի լուծման համար տարբեր կարծիքներ, սակայն որոշվեց առաջին փուլում շատ շտապ ներկայացնել առաջարկություն «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 17.1-րդ մասը լրացնել հեղուկացված ածխաջրածնային գազերի մակնշման պահանջները լրացնելու վերաբերյալ, այն է հեղուկացված ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում կոմունալ-կենցաղային և արտադրական սպառման կամ ավտոմոբիլային տրանսպորտի շարժիչային վառելիքի համար նախատեսված վառելիքաբաշխիչ սարքավորումների վրա նպատակային նշանակության վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրել վարորդին տեսանելի հատվածում, մեծ տառերով, իսկ կոմունալ-կենցաղային և արտադրական սպառման համար նախատեսված վառելիքաբաշխիչ սարքավորումների վրա նպատակային նշանակության վերաբերյալ տեղեկատվությունը պետք է պարտադիր պարունակի նաև նշում, որ այն ենթակա չէ ավտոմեքենաների լիցքավորման համար:

Գևորգ Պապոյանը առաջարկեց շատ արագ նախապատրաստել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածում մակնշման հետ կապված լրացում կատարելու նախագիծ, որի ընդունումից հետո կրկին անրադառնալ խնդրին:

Օրակարգի հինգերորդ հարց՝ պետական գնումներում համապատասխանության գնահատման փաստաթղթերի ստուգման խնդիր՝ զեկուցող Ա.Կոտոյան:

Արմեն Կոտոյանը ներկայացրեց պետական գմումների գործընթացում մասնակիցների կողմից ներկայացվող ապրանքների և դրանց վերաբերյալ ներկայացված համապատասխանության գնահատման փաստաթղթերի նույնականացման հետ կապված խնդիրը:

Հնչեցվեցին տարբեր կարծիքներ նույնականացման գործընթացի վերաբերյալ: Արդյունքում առաջարկվեց ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակին՝ տեղեկացնել պետական գնումների կազմակերպման գործընթացում ներգրավված համապատասխան մարմիններին, որ գնման գործընթացում մասնակիցների կողմից ներկայացվող ապրանքների և դրանց վերաբերյալ ներկայացված համապատասխանության գնահատման փաստաթղթերի նույնականացման ընթացքում առաջացող խնդիրների դեպքում՝ նրանք կարող են դիմել տվյալ ապրանքների նկատմամբ համապատասխան վերահսկողություն իրականացնող տեսչական մարմիններին:

Օրակարգի վեցերորդ հարց՝ ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների ներմուծման կարգի հետ կապված հարցեր՝ զեկուցող Ն. Հովակիմյան:

Քննարկման արդյունքում խորհրդի անդամների կողմից ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների ներմուծման կարգի հետ կապված հարցերը ընդունվեցին ի գիտություն:

Օրակարգի յոթերորդ հարց՝ բիտումի որակական և անվտանգային չափանիշների հետ կապված հարցեր՝ զեկուցող Ն.Հովակիմյան:

Քննարկման արդյունքում խորհրդի անդամների կողմից բիտումի որակական և անվտանգային չափանիշների հետ կապված հարցերը ընդունվեցին ի գիտություն:

Օրակարգի ութերորդ հարց՝ հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի բյուջետային հայտին՝ զեկուցող Ա.Կոտոյան:

Խորհուրդը միաձայն հավանություն տվեց Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի բյուջետային հայտի նախագծին:

Օրակարգի իններորդ հարց՝ հաշվետվության ներկայացում՝ զեկուցող Ա.Կոտոյան:

Խորհուրդը միաձայն հավանություն տվեց Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2025 թվականի գործունեության հաշվետվությանը:

Խորհրդի նախագահ՝

_____ Գ.Պապոյան
ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ Գ.Սահակյան
ստորագրություն